361
Р-64

361
Թ-64
№ 261.
1 MAR 2010

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԹԻՖԼԻՍԻ

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1911 Թ.

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

370
434-Տե
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
Էլեկտրաշարժ տպարան Օր. Ն. Աղանեանի, պօլից., 7.
1912

12.6 FEB 2014

Բ-64

370
Հ434-ՏՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ, ՈՐ ԿԱՅԱՑԱՒ 1911 Թ. ՄԱՅԻՍԻ 14-ԻՆ

Վարչութեան նախագահուհի տ. Ծատուրեան բանալով նիստը, բացատրում է, որ թէև ներկայ են միմիայն քսան հոգի՝ ոչ օրինական թիւ՝ սակայն որովհետև երկու նիստը չկայացաւ, չնայած նրան, որ ներկայ նիստի համար նոյն իսկ լրագիրներում յայտարարուել էր, կրկին ժողովը բազմամարդ չէ, ուրեմն, անյոյս է սպասել։ Առաջարկում է ընդհանուր ժողովի համար նախագահուհի ընտրել։

Միաձայն ընտրւում է տ. Հ. Ռոստամեանը, որի ղեկավարութեամբ նիստը շարունակւում է։

Տ. Ե. Բահաթրեանը ընտրւում է քարտուղար։

Տ. Ռոստամեանի առաջարկութեամբ կարդացւում է.

1) 1910 թ. ապրիլի 11-ին կայացած ընդհանուր ժողովի արձանագրութիւնը։

2) Ընկերութեան 1910 թ. գործունէութեան զեկուցագիրը

3) Կար ու ձևի արհեստանոցի զեկուցումը $190^{9}/_{10}$ *թ.*

4) Գուլպագործութեան արհեստանոցի զեկուցումը

5) 1910 թ. ել և մուտի հաշիւը

6) 1910 թ. վերստուգիչ յանձնաժողովի զեկուցագիրը

7) Ընկերութեան նախահաշիւը

Ամեն մի արձանագրութիւն կարդալուց յետոյ՝ նախագահուհին առաջարկում է ժողովականներին քննադատութեան ենթարկել տուած նիւթերը։ Ապա զեկուցագիրը միաձայն հաստատւում են և ժողովը անցնում է հերթական հարցերին։ Տ. Ռոստամեանը յայտնում է վարչութեան որոշումը՝ փակել արհեստանոցի առաջին բաժանմունքը։

Վարչութեան անդամ տ. Ե. Յարութիւնեանը բացատրում է ժողովականներին այն շարժառիթները, որոնք դրդել են վարչութեանը այդ որոշումը կայացնելու։

Արհեստանոցում ընդունուող աշակերտուհիները ընդհանրապէս ծխական դպրոցներից են։ Ուրեմն բաւականաչափ պատրաստ մտնելու երկրորդ բաժանմունքը։ Հետևապէս՝ կարիք չկայ աւելորդ դասարան ունենալու, քանի որ այդ կապուած է որոշ ծախքերի հետ։ Նոյն նիւթական միջոցները գործադրելով՝ կարելի է գործը լայնացնել— աւելի պատրաստութիւն ունեցող շրջանաւարտներ տալով։

Ժողովը անցնում է այդ առաջարկի քննադատութեանը։

Տ. Լիսիցեան առարկում է թէ՝ ծխական դպրոցների ծրագիրը չի համապատասխանում ընկերութեան ծրագրին — վերջինս աւելի լայն է։

Տ. Կուզանեան. ընդհանրապէս ծխական դպրոցներում չեն անցնում որոշուած ծրագրով։ Պէտք է ապագայում ծխական դպրոցների ձեռագործի ծրագիրը յարմարեցնել մեր արհեստանոցի ծրագրին։

Տ. Զարգարեանը գտնում է վարչութեան տուած պատճառաբանութիւնները անբաւարար և հարց է տալիս՝ մի՞թէ ընկերութեան միակ նպատակն է կար ու ձև սովորացնելը և ոչ թէ տարրական գիտելիքների որոշ պաշար տալը։

Վարչութեան անդամները բացատրում են, թէ յայտնի որոշումը կայացնելով՝ ղեկավարուել են այլ դիտաւորութեամբ։ Աւելի նպատակայարմար է՝ քանի որ առանձին կարիք չկայ առաջին բաժանմունք ունենալու՝ բանալ բարձր դասարան, այսինքն՝ դասընթացքները շարունակուեն հինգ տարի և աւարտողը թողնի արհեստանոցը աւելի պատրաստութիւն ունենալով։

Տ. Խատիսեան. Փորձը ցոյց կը տայ թէ որչափ նպաստաւոր է վարչութեան մտադրութիւնը։

Տ. Լիսիցեանը խոստովանւում է, որ առաջարկութիւնը համակրական է։

Տ. Ցուրինեանը աւելացնում է. «Թէև վարչութիւնը որոշել է վակել առաջին բաժանմունքը, սակայն աշակերտուհիների թիւը կմնայ անփոփոխ։

Տ. Ղամբարեանը առաջարկում է վերջի դասարանի աշակերտուհիներին երկու տարի պահել աւելի հմտութիւն ձեռք բերելու։

Հարցը բաւականին պարզուած համարելով՝ տ. Առստամեանը առաջարկում է քուէարկութեան ենթարկել և ժողովը՝ 16 հոգի ընդդէմ 2-ի (մէկը մնաց ձեռնպահ) ընդունում է I բաժանմունքի փակման հարցը։

Զնայած, որ վարչութեան առաջարկը արդէն որոշուած է համարում, սակայն՝ աչքի առաջ ունենալով, որ ժողովականներից երեք հոգի ընդդէմ էին՝ տ. Յարութիւնեանը խնդրում է հակառակորդներին աւելի լաւ պարզաբանել իրանց տեսակէտը։

Օր. Բայսողոլեան բացատրում է, որ ամառը աղքատները անկարող կլինեն պատրաստուել երկրորդ բաժանմունքի համար։ Հետևապէս, անյարմար է փակել I բաժանմունքը։

Տ. Կուզանեան աշխատում է հարցը դնել սկզբունքային հողի վրայ՝ աւելացնելով թէ ծխական դպրոցներ աւարտողներից շատերը առաջին բաժանմունքում ուղղակի ձանձրոյթ են զգում։

Տ. Ղամբարեանը յայտնում է, որ վճռական միջոցը կթելադրի թէ ծնողներին և թէ ծխական դպրոցների վարչութեանը յարմարեցնել ծրագիրը։

Տ. Լիսիցեան առաջարկում է վարչութեանը ունենալ ընդհանուր ժողովներ դպրոցական հոգաբարձուների հետ՝ ծրագիրը ուղղելու. այսինքն աւարտած աշակերտուհիներին հնարաւորութիւն տալ անգործ չմնալ, այլ մտնել երկրորդ բաժանմունք։

Վարչութեան նախագահուհի տ. Խատիսեան յայտնում է թէ հանգամանքները իրենք ցոյց կտան ապագայում նպատակայարմար ձևը։ Գուցէ վարչութիւնը եթէ կարևոր գտնի վճռի ամառուայ դասընթացքներ բանալու։

Հարցը փակւում է։

Այնուհետև ընդհանուր ժողովի նախագահուհին յայտնում է, որ վարչութեան կազմից հերթով հեռանում են երեք հոգի. տիկ. Հ. Մարտիրոսեան, Շ. Օգանէսեան և Մ. Ղարաջեան։ Ուրեմն կարևոր է լրացուցիչ ընտրութիւններ կայացնել երեք անդամ և չորս փոխանդամ ընտրելու։ Բացի դա նախագալիք տարուայ համար պէտք է ընտրել վերատեսուչ յանձնաժողով։ Կարդացւում է վարչութեան անդամների և փոխանդամների ցուցակը։ Մարիամ Ստեփանեան Խատիսեան, Մարգարիտ Սերգէյեան Ցուրինեան, Նունէ Պետրոսեան Ղամբարեան, Մարիամ Միքայէլեան Շիեան, Երանուհի Ստեփանեան Յարութիւնեան, Վառվառէ Սերգէյեան Միլեան,

Մարիամ Միքայէլեան Լիսիցեան, Եկատերինէ Թարխանեան Եարալեան։ Տ. Առստամեանի առաջարկութեամբ տ. Հայկանոյշ Գրիգորեան Մարտիրոսեանը վերընտրուում է վարչութեան անդամ բաց քուէարկութեամբ և միաձայն։

Այնուհետև կարդացուում է անդամուհիների ցուցակը և սկսւում են ընտրութիւններ՝ գաղտնի քուէարկութեամբ։ Երկու անդամ վարչութեան, չորս փոխ-անդամ, երեք անդամ ու երկու փոխ-անդամ վերաստուգիչ յանձնաժողովի։

Ընտրութեան հետևանքը. վարչութեան անդամ՝ Սուսաննա Միքայէլեան Օհաննէսեան (13 ձայնով) Մարիամ Դաւթեան Կարաջեան 14)։ Փոխանդամ. տ. Ալիբէգեան (17 ձայնով) օր. Աթանդիլեան, (13) տ. Կարգանեան (12) տ. Միրզոյեան (12)։ Վերաստուգիչ յանձնաժողովի. տ. Աթանդիլեան (19) տ. Բարխուդարեան (18) տ. Աւետեան (15)։ Փոխանդամ տ. Կուսիկեան, տ. Աստուածատուրեան։

Ուշ լինելու պատճառով ընդհանուր ժողովի նախագահը փակում է նիստը, ժամը 4-ին։

Նախագահ ընդհանուր ժողովի Հ. Առստամեան

Քարտուղար Ե. Բահաբրեան

Թիֆլիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան վարչութեան գործունէութիւնը 1911 թուին։

Թիֆլիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան վարչութեան գործունէութիւնը նախընթաց տարուայ նման կայանում էր Ընկ. երեք արհեստանոցներին կանոնաւոր ընթացք տալու մէջ։ Այդ երեք արհեստանոցների մասին մանրամասն տեղեկութիւններ տրւում է հետևեալ էջերում, իսկ ինչ վերաբերում է մնացեալ գործունէութեան՝ գլխաւոր կէտերից մէկը Ընկերութեան նոր կանոնադրութեան հաստատել տալու գործն է։ Վարչութիւնը արդէն ստացել է այդ նոր կանոնադրութիւնը, որ հաստատուած է կառավարութեան կողմից և այսուհետև Ընկերութիւնը իւր գործունէութիւնը պէտք է շարունակէ այդ նոր կանոնադրութեան հիման վրայ։ Նոր կանոնադրութեան էական կէտը այն է, որ Ընկերութիւնը այսուհետև կոչուելու է «Կովկասեան Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւն» և իրաւունք ունի գաւառներում ճիւղեր բանալու։ Գաւառներից նոյնիսկ արդէն մի երկու դիմումներ են եղել ճիւղ բաց անելու վերաբերմամբ, միայն տարեկան 6 ռ. անդամավճարը և մշտական 150 ռ. անդամավճարը գործը դժուարացնում է և լսւում են ցանկութիւններ, որ իսկական անդամների համար գաւառներում 3 ռ., մշտական անդամների համար 150 ռ. լինի։ Վարչութիւնս այս հարցը դնելով ներկայ ընդհանուր ժողովի օրակարգի հարցերի շարքը, խնդրում է, որ ընդհանուր ժողովը լիազօրէ Վարչութեանը դիմել ուր հարկն է, խնդրելով կանոնադրութեան այդ կէտը փոխել ցանկալի կերպով, որպէս զի այնուհետև կարելի լինի գաւառներում ճիւղեր բաց անել։

Վարչութիւնս 1911 թ. յուլիսից ստիպուած էր թողնել իւր հին բնակարանը և նորը վարձել, բայց մինչև նոր բնակարան վարձելը իւր մտադրութիւնը չէր թողնում սեպհական շէնք ձեռք բերելու վերաբերմամբ։ Սակայն այս մտադրութեան իրագործումը Ընկերութեան նիւթական սուղ միջոցների շնորհիւ միշտ խոչնդոտի էր հանդիպում և Վարչութիւնս սեպտեմբերից ստիպուած եղաւ

այս բնակարանը վարձել երեք տարով։ Այժմ վարչութեան մտադրութիւնը աւելի մօտ է իրականանալու, քանի որ հանգուցեալ Ա. Մանթաշեանի ժառանգները հանգուցեալի բարեգործական նպատակների համար թողած 200000 ռ. գումարից յատկացրել են Ընկերութեանս 20000 ռ., որպիսին թէև դեռ չի ստացուած, բայց բերանացի կերպով խոստացուած է յանձնել վարչութեանս մինչև մայիս, կամ մայիսուայ ընթացքում։ Ի նկատի ունենալով այս նուիրատուութիւնը, Վարչութիւնս որոշեց մինչ սոյն բնակարանի պայմանաժամը լրանալը աշխատել սեպհական տուն ձեռք բերել, ուստի առաջարկում է ընդհանուր ժողովին դարձեալ մի մասնաժողով ընտրել և յանձնել այդ մասնաժողովին Վարչութեան հետ միասին հոգալ այս հարցի վերաբերմամբ։

Հայուհեաց Բարեգ. Ընկ.-ը հաշուետուութեան տարում ստացել է հետևեալ նուիրատուութիւնները։

Պ. Ալէքսանդր Այվազեանից ի յիշատակ իւր մօր՝	100 ռ. — »
Կուզանեանի գինեվաճառ. Ընկերութիւնից	50 ռ. — »
Թիֆլիսի ժողովարանից	150 ռ. — »
Թոյլ աշակ. ամառանոց ուղարկելու համար հաւաքուած է տ. տ. Ն. Գամբարեանի, Մ. Շխեանի և Գուլեանի միջոցաւ	47 ռ. 30 կ.

Ստացել են զանազան անձնաւորութիւններից նուիրատուութիւն, որոնց վարչութիւնս շնորհակալութիւն է յայտնել լրագրութեան միջոցաւ 94 ռ. 20 կ.

տ. Եղիսաբէթ Կորգանեանից	3 ռ. — »
պ. Կ. Մ. Թամամշեանից	10 ռ. — »
տ. Մ. Ս. Ծուրինեանից	3 ռ. — »
տ. Վ. Ս. Միլեանից ի յիշատակ Ն. Ս. Թամամշեանի	25 ռ. — »
Քաղաքային Վարկի Ընկերութ.	150 ռ. — »
տ. Ն. Գամբարեանից ի յիշատակ իշխան. Ե. Բէբութեանի պսակի փոխարէն յօգուտ գրադարանի	20 ռ. — »
տ. Մ. Աբեանից ի յիշատակ դստեր Նունէի . .	100 ռ. — »
տ. Քագարեանից	5 ռ. — »
տ. Վ. Գուլազեանից ի յիշատակ Ե. Գուլազեանի .	100 ռ. — »
Օր. Թ. Լալայեանից յօգուտ արհեստանոցի աշակ.	100 ռ. — »
Նուէր ստացուած մահուդի վաճառումից	24 ռ. — »
Տ. Մ. Աբեանից Ծննդեան տօների առթիւ	25 ռ. — »

Ն. Գ. Ռօտինեանի ժառանգներից ըստ կտակի	200 ռ.
Թիֆլիզ քաղաքից	300 ռ.
Ընդամենը	1506 ռ. 50 կ.

Ընկերութիւնը ստացել է նաև մի կտոր հող 285 քառ. սաժ. Ծըղնէթ գիւղում։ Այս հողը նուիրել է Ընկերութեանս իշխ. Գէորգ Գրիգորեան Բէհբութեանը՝ իւր վրայ վերցնելով և հաստատման ծախքերը։ Վարչութիւնս յայտնել է միայն գրաւոր շնորհակալութիւն, որովհետև իշխ. Բէհբութեանը ինքը խնդրել էր մամուլի միջոցաւ շնորհակալութիւն չյայտնել։

Տ. Մ. Աբեանից ստացուել է 66 արշ. չիթ յօգուտ խեղճ աշակերտուհիների։

Տ. Մ. Խատիսեանից Եւրոպայի քարտէզը և մի կախովի լամպա։

Տիլլէ և Դիտրիխից զանազան իրեր 5 ռ. արժողութեամբ։ Բոլոր նուիրատուներին վարչութիւնս մամուլի միջոցաւ կամ գրաւոր յայտնել է իւր խորին շնորհակալութիւնը։

Հաշուէտուութեան տարում մշտական անդամ գրուել են Ընկերութեանս 150 ռ. վճարելով՝ հետևեալ անձինք. տ. Մարգարիտ Անանեանց, տ. Մարիամ Մէլիքեանց և տիկ. Աննա Մաղաթեանց, որոնցից ընդամենը ստացուել է 450 ռ.։

1911 թ. վարչութիւնս մասնակցել է տաղանդաւոր վիպասան և դրամատուրգ Շիրվանզադէի, դերասանուհի Զաբէլի և Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան 30-ամեայ յօբելեաններին, պատգամաւոր է ընտրուել Ընկ. կողմից տ. Ե. Յարութիւնեանը և ուղերձներով շնորհաւորել այդ յօբելեանները։

Վարչութիւնս յայտնում է իր խորին շնորհակալութիւնը տ. Վ. Միլեանին և օր. Ն. Խաչատրեանին, որոնցից առաջինը պարապում է ձրի շաբաթական 4 դաս, իսկ երկրորդը պարապում էր մինչև յունուար 1912 թ. շաբաթական 4 դաս. Նոյնպէս բժ. Ն. Խատիսեանին, որ ձրիապէս շարունակում է բժշկել արհեստանոցի աշակերտուհիներին։

Զեկուցումն գուլպագործության արհեստանոցի մասին

1911 թ. գուլպագործության արհեստանոցում բացի վարժուհուց սովորում էին 8 աշակերտուհի։ Նրանցից երկուսը աւարտելուց յետոյ մտան մասնաւոր արհեստանոցներ աշխատելու, երրորդը մեքենայ ձեռք բերեց և աշխատում է տանը, իսկ մէկը գնաց իւր հայրենիքը Նոր-Բայազէտ և այնտեղ է աշխատում։ Միւսները դեռ շարունակում են։

1911 թ. վերջին փորձ արուեց այդ արհեստանոցում մետաքսէ թելերից գործուածքներ պատրաստել և եթէ պահանջ լինի այդ գործուածքների, այն դէպքում նպատակայարմար կլինի այս արհեստանոցը աւելի ընդարձակել, պատրաստելով վարպետուհիներ գաւառների համար։

Զեկուցումն գլխարկի արհեստանոցի մասին

Գլխարկի արհեստանոցի առաջին շրջանաւարտները 1911 թ. մայիսին վերջացրին դասընթացը և բոլոր շրջանաւարտները ներկայումս աշխատում են զանազան արհեստանոցներում և խանութներում։

Սեպտեմբերից դարձեալ ընդունուել են 12 նոր աշակերտուհիներ և այդպիսով այժմս այդ արհեստանոցում սովորում են 20 հոգի։

Գործը շատ լաւ է գնում, աշակերտուհիները սովորում են մեծ եռանդով, պատուէրներ նոյնպէս բաւական շատ կայ։

Այս արհեստանոցը թէև իւր ծախքերը չի ծածկում, բայց Ընկերութեան վրայ նստում է տարեկան միայն 200 ռ. և այդ գումարով սովորում են արհեստ տարեկան 20 հոգի։ Վարչութիւնս գտնելով այս արհեստանոցի արդիւնքը բաւարար, առաջարկում է ընդհանուր ժողովին թոյլ տալ շարունակել այս գործը և աւելի ընդարձակել ապագայում։

ԶԵԿՈՒՑՈՒՄՆ ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ՄԱՍԻՆ 1910/11 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒԱՑ

1910 թ. սեպտեմբերին արհեստանոցում սովորում էին 119 աշակերտուհիք, որոնք հետևեալ կերպով էին դասաւորուած.

I	բաժանմունքում	— 30
II	»	— 31
III	»	— 25
IV	»	— 19
V	»	— 14

Ուսումնական տարուայ ընթացքում արհեստանոցից հեռացան 5 հոգի հետևեալ պատճառներով.

2-ը	տեղափոխուեցին մի-ուրիշ քաղաք
2	հիւանդացան
1	ամուսնացաւ

Բոլոր աշակերտուհիների ծնողներին ըստ պարապմունքի կարելի է բաժանել հետևեալ դասակարգերի.

Արհեստաւոր	44
Վաճառական	17
Մանրավաճառ	35
Գործակատար	6
Բանւոր	14
Հոգևորական	3

Արհեստանոցի որբերի թիւն էր 4, իսկ կիսաորբերի, որոնք զուրկ են հօրից՝ 32։

Արհեստանոցի աշակերտուհիները, բացի I նախապատրաստական բաժանմունքից, որտեղ պատուէրներ չեն ընդունուում, տարուայ ընթացքում վաստակել նպատուէրներից.

II բաժ.1	3 ռ. 50 կ.
III բաժ.	140 ռ.85 կ.
IV և V բաժ.	569 ռ. 25 կ.
	853 ռ. 60

Բացի պատուէրներից՝ բոլոր աշակերտուհիները, պատուէրներից ազատ ժամանակ, կարել են կանանց սպիտակեղէն, բլուզներ ու շրջազգեստներ, մանկական զգեստներ ու գոգնոցներ, նըմանապէս և սեղանատան սպիտակեղէն, որոնք սովորաբար վաճառքի են հանուում տարեկան ընդհանուր ժողովի օրը։ Այդ վաճառքից զուտ արդիւնք ստացուել է 237 ռ. 85 կ. որ պատուէրներից ստացած գումարի հետ միասին կազմում է 1091 ռ. 45 կ.

Այս գումարից ընթացաւարտ աշակերտուհիները ստացել են են %—101 ռ. 43 կ.

Արհեստանոցի ուսուցչական խումբը, որ կազմած է 10 վարժուհի-դասատուներից և մի աւագ վարժուհուց, ունեցել է մանկավարժական ժողովի 8 նիստ (չըհաշուած մասնաւոր խորհրդակցութիւնները, որ գրեթէ ամեն շաբաթ տեղի էին ունենում), որտեղ արծարծուել են ու վճռուել մանկավարժական և մասնագիտական խնդիրներ արհեստանոցին վերաբերեալ։

Տարուայ ընթացքում իւրաքանչիւր աշակերտուհի բացակայել է միջին թւով 10 օր։

Տարուայ վերջն աշակերտուհիները հետևեալ յառաջադիմութիւնը ցոյց տուին.

Փոխադրուեցին հետևեալ բաժանմունք 91
Մնացին միևնոյն բաժանմունքում 9
Աւարտեցին և ստացան վարպետուհու վկայական 14.

Վարպետուհու կոչում ստացան հետևեալ աշակերտուհիները.

1, Աբուլեան Սիրանոյշ, 2. Ալափեան Շուշանիկ, 3. Ազատարեան Վարսենիկ, 4. Ասլանեան Գայիանէ, 5. Ախշարումեան Վարսենիկ, 6. Գորոյեան Արփենիկ, 7. Եղիկեան Մարիամ, 8. Խարազեան Շուշանիկ, 9. Ղարիբեան Վարդուհի, 10. Վարդանեան Մարիամ, 11. Քացախեան Մարիամ, 12. Քոթանջեան Մարիամ, 13. Ուլիբէգեան Անահիտ, 14. Տարախչեան Շողակաթ։

Ներկայումս վերոյիշեալ ընթացաւարտներից 3 հոգի գնացել են գաւառ. վարժուհու պաշտօնով. 1-ը մտել է մի յայտնի արհեստանոց կատարելագործուելու նպատակով. 1-ը ընտրել է մի այլ ասպարէզ, այն է՝ սովորում է բեմինգտօնի վրայ, իսկ մնացածները պատուէրներ են ընդունում տանը կամ օրավարձով աշխատում զանազան ընտանիքներում։

Զքաւոր աշակերտուհիների թիւն էր 23։ Սրանք ստացել են

զգեստ, կօշիկ, սպիտակեղէն, դասական և ձեռագործի պիտոյք և դեղօրայք։ Սրանց թիւմն են և բարերարների անուան հետևեալ 8 աշակերտուհիները.— Կիւրեղեան Լուսնթագ և Թոխատցեան Վարդիթեր կ. Մուտաֆեանի անուան. Շիրոյեան Սիրանոյշ և Գրիգորեան Մանեակ— տիկ. Մակարեանի անուան, Սիրունեան Աստղիկ—Ն. Թամամշեանի, Թարխանեան Մարթա—Ն. Փրիդոնեանի, Թանդիլեան Արփենիկ— Ս. Փոնդոյեանի և Ռստիկեան Ազնիւ—Կ. Եւանգուլեանի անուան։

Զքաւոր և թուլակազմ աշակերտուհիներից 4 հոգի ամարային արձակուրդին ուղարկուել են Դիլիջան ամարանոցը խանգարուած առողջութիւնը վերականգնելու։

Պարապմունքն սկսուել է սեպտեմբերի 3-ին և աւարտուել յունիսի 1-ին։

	1911 թ. նախահաշիւ	Իսկական մուտք			
1911 թ. յունուարի 1 ին մնում էր.					
1. Տոկոսաբեր արժէթղթեր		21674	05		
2. Շարժական կայք		1628	91		
3. Ձեռագործի նիւթեր		550	59		
4. Առևտրական բանկում որոշ ժամանակամիջոցով		3000			
5. Ընթացիկ հաշուով առևտրական բանկում		1200			
6. Պետական խնայողական գանձարանում		50			
7. Ընկերութեան գանձարանում		1344	30	29447	85
Ստացած է					
1. Անդամավճարներ	930	798			
2. Տոկոս ընկերութեան արժէթղթերից	850	829	36		
3. « յատուկ դրամագլխից	152	152			
4. Կարուձևի արհեստանոցի պատուէրներից	1000	1016	35		
5. Ձեռագործների վաճառքից	250	266	53		
6. Նուիրատուութիւններ	800	1511	50		
7. Ներկայացումից	3000	1771	24		
8. Միանուագ անդամավճար տ. Մարգարիտ Անանեանից, տ. Մարիամ Մելիքեանից և տ. Աննա Մաղաթեանից	900	450		6794	98
Գումար				36242	83

	1911 թ. նախահաշիւ	Իսկական ելք			
Ծախսուած է					
1. Ռոճիկ վարժուհիներին և ծառայողներին	5100	4860	33		
2. Բնակարանի վարձ սեպտեմբերի 1-ից մինչև մարտի 1-ը	1800	910	50		
3. Նախապատրաստական ձեռագործների համար նիւթեր	20	60	02		
	88	77	47		
4. Մանր ծախս	20	50	27		
5. Տարազի ամսաթերթեր	150	202	40		
6. Վառելիք	50	142	44		
7. Ջքաւոր աշակերտուհ. զգեստ և նպաստ	20	6	42		
8. Դեղորայք	100	196	08		
9. Դիւանական և տպագրական ծախսեր	80	67	30		
10. Տոմսակներ պահելու և ապահովագրութեան	100	86	40		
11. Կահ-կարասիք և բնակարանի վերանորոգումն	120	103	43		
12. Բանուորուհիների օգտին հանած տոկոս		180			
13. Թուլակազմ աշակերտուհ. ամառանոց ուղարկելը	16	13			
14. Էքսպերտներին քննութեան համար		45			
15. Բնակարանից իրեր տեղափոխելը	34	53	70		
16. Անակնկալ ծախս					
17. Կ. Եւանդուլեանի, Ն. Փրիդոնեանի, Գ. Մուքաֆեանի, Մ. Մակարեանի, Ն. Թամամշեանի և Ս. Փոնդոյեանի անուան թոշակառուներին	152	152			
	32	32	74	7239	50
18. Երեխայոց զուարճութեան համար		40	03		
Գուլպ. համար ծախսուած է պահեստի գումարից					
19. Գլխարկների արհեստանոցի համար ծախսուած է պահեստի գումարից		223	83	263	86
1912 թ. 1-ին մնում է					
1. Տոկոսաբեր արժէթղթեր կար 21674 մ.05 կ. ծախսուած է 800-ի ընտա, որից ստացած է—738-79		20935	26		
2. Շարժական կայք կար 1628-91 աւելացաւ + 73-69		1702	60		
3. Ձեռագործի նիւթեր		740	71		
4. Առևտրական բանկում որոշ ժամանակամիջոցով		3154	30		
5. Ընթացիկ հաշուով առևտրական բանկում		1100			
6. Պետական խնայողական գանձարանում		50			
7. Ընկերութեան գանձարանում		1056	60	28739	47
Գումար				36242	83

ՄՈՒՏՔ

Գուլպանոցի ելևմտից հաշիւը

1911 թ. յունուարի 1-ին մնում էր.				
Շարժական կայք	433	80		
Թելեր	199	42	633	22
Ստացուած է պատուէրներից	332	57		
Ասեղների համար	10	30	342	87
Պահեստի գումարից ստացուած է			40	03
			1016	12

Գլխարկների արհեստանոցի հաշիւը

Պատուէրներից ստացուած է	218	95		
Պահեստի դրամագլխից ստացուած է *)	223	83	442	78

*) Նախորդ տարուանից ընդհանուր ժողովի վճռի համաձայն արհեստանոցի համար յատկացրած 500 րուբլուց մնում էր 166 ր. 73 կ., իսկ ծախսուած է 223 ր. 83 կ.։

ԵԼՔ

Ռոճիկ վարժուհուն	262	50		
Բանւորուհիների օգտին հանած տոկոս . .	148	62		
Ասեղներ	25	10		
Մանր ծախս	12	42	448	64
1012 թ. յունուարի 1-ին մնում է				
Շարժական կայք	433	80		
Թելեր	133	68	567	48
			1016	12

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1004
15964

Ռոճիկ վարժուհուն	420			
Նախապատրաստական ձեռագործերի համար				
Նիւթեր	6	03		
1912 թ. յունուարի 1-ին մնում են նիւթեր	15			
Տարազի ամսաթերթ	1	75	442	78

ԱԿՏԻՎ

1912 թուի յունուարի

1.	Տոկոսաբեր արժէթղթեր	20935 ռ. 26 կ.
2.	Շարժական կայք	1702 ռ. 60 կ.
3.	Ձեռագործի նիւթեր	740 ռ. 71 կ.
4.	Առևտրական բանկում որոշ ժամանակամիջոցով	3154 ռ. 30 կ.
5.	Ընթացիկ հաշուով առևտրական բանկում . . .	1100 ռ.
6.	Պետական խնայողական գանձարանում	50 ռ.
7.	Ընկերութեան գանձարանում	1056 ռ. 60 կ.
		28739 ռ. 47 կ.

1-ի բալանսը

ՊԱՍՍԻՎ

1.	Անձեռնմխելի դրամագլուխ		11709 ռ. 40 կ.
2.	Յատուկ դրամագլուխ		4 000 ռ.
3.	Պահեստի դրամագլուխ կար	7283 ռ. 24 կ.	
	Գուլպանոցի և գլխարկների արհեստանոցի համար ծախսուած է	263 ռ. 86 կ.	7019 ռ. 38 կ.
4,	Ծախսի գումար կար	6455 ռ. 21 կ.	
	1811 թուի դեֆիցիտը	444 ռ. 52 կ.	6010 ռ. 69 կ.
			28739 ռ. 47 կ.

Առաջին խաղարկութեան տոմսակ № 17526/46
Երկրորդ խաղարկութեան տոմսակ № 06477/82
Երրորդ խաղարկութեան տոմսակ № 02686/17

1911 թուի եկամուտ	7239 ռ. 50 կ.
մուտք	6794 ռ. 98 կ.
դեֆիցիտ	444 ռ. 52 կ.

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ 1911 Թ.

Հաշուետուութեան տարին վերաստուգիչ յանձնաժողովը բաղկացած էր երեք անդամներից. տ. տ. Հ. Ալթանդիլեան, Ս. Բարխուդարեան և Ն. Աւետեան, որոնք ստուգելով ընկերութեան եկամտից հաշիւը և համեմատելով փաստաթղթերի հետ, գտան, որ հաշիւները պահուում են կանոնաւոր և միանգամայն համապատասխանում են ներկայացրած փաստաթղթերին։

Վերաստուգիչ մանաժողովի անդամներ.

Տ. Հ. Ալթանդիլեան
Տ. Ս. Բարխուդարեան
Տ. Ն. Աւետեան

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1912

ՄՈՒՏՔ

Իսկական անդամներից	*810 ռ.*
Ընկերութեան գումարների տոկոս	*830 ռ.*
Տոկոս յատուկ գումարից	*152 ռ.*
Պաուէրներից	*1100 ռ.*
Ձեռագործների վաճառքից	*250 ռ.*
Նվիրատուութիւններ	*1300 ռ.*
Զբօսանքից և ներկայացումից	*2640 ռ.*
Միանվագ վճարող անդամներից	*300 ռ.*
	7382 ռ.

ՆԱԽԱՀԱՇԻՒ

Թուի

ԵԼՔ

Ռոճիկ վարժուհիներին և ծառայողներին	*4464 ռ.*
Տան վարձ	*1800 ռ.*
Նախապատրաստական ձեռագործների համար նիւթեր	*25 ռ.*
Մանր ծախս	*70 ռ.*
Տարազի ամսաթերթեր	*50 ռ.*
Վառելիք	*150 ռ.*
Զքաւոր բանւորուհիներին զգեստ և նպաստ	*60 ռ.*
Դեղօրայք	*20 ռ.*
Դիւանական և տպագրական ծախսեր	*100 ռ.*
Տոմոակներ պահելու և ապահովագրութեան	*68 ռ.*
Կահկարասիքի վերանորոգումը	*75 ռ.*
Բանւորուհիների օգտին հանած գումար	*100 ռ.*
Անակնկալ ծախս	*35 ռ.*
Էկսպերտներին քննութեան համար	*13 ռ.*
Թոշակառուներին	*152 ռ.*
	7182 ռ.
Գլխարկների արհեստանոցի համար	*200 ռ.*
	7382 ռ.

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

Պատուաւոր անդամներ.

պ. Ալ. Քիշմիշեան
տ. Վ. Ռոտինեան
տ. Մ. Խատիսեան
տ. Հ. Մարտիրոսեան
տ. Ն. Ղամբարեան
տ. Ս. Երիցեան

Ընկերութեան վարչութիւն

տ. Մ. Խատիսեան, ատենապետուհի
տ. Հ. Մարտիրոսեան, փոխատենապետուհի
տ. Ն. Ղամբարեան
տ. Մ. Ծուրինեան
տ. Ե. Յարութիւնեան քարտուղար
տ. Մ. Ղարաջեան
տ. Մ. Շխեան
տ. Մ. Լիսիցեան
տ. Ս. Օգանէսեան
տ. Վ. Միլեան, գանձապահ
տ. Ե. Եարալեան

Վերատեսուչներ յանձնաժողով

տ. Ե. Աւթանդիլեան
տ. Ս. Բարխուդարեան
տ. Ն. Աւետեան

Փոխանդամներ

տ. Մ Կուսիկեան
տ. Ե. Աստու ածատրեան։

ՄԻԱՆՈՒԱԳ ՎՃԱՐՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ

տ. Աբիեան Մարգարիտ
✠ կոյս Աբամելիքեան
տ. Աւան.-Իւզբաշեան Անդա
տ. Աւթանդիլեան Հեղինէ
տ. Ալիբէգեան Նունէ
տ. Ալիխանեան Նադէժդա
տ. Աղաբեգեան Մարիամ
✠ իշ. Արղութեան Երկայնաբազուկ. Մարիամ Սոլ.
Իշխան Արղութեան Երկայնաբազուկ Մարիամ Յովհ.
10 տ. Ադիլխանեան Հեղինէ
օր. Աւթանդիլեան Եղիսաբէթ
տ. Անանեան Մարգարիտ (նոր անդամ)
տ. Բաբայեան Սոֆիա
տ. Բաղդասարեան Անահիտ
տ. Բաբայեան Վառվառէ
Իշ. Բէհրութեան Կատարինէ
իշ Բէհրութեան Վարվառէ
✠ իշ Բէկթաբէկեան Մարիամ
տ. Գէորգեան Նունէ
20 ✠ Դոլուխանեան Եղիսաբէթ
տ. Եւանգուլեան Վարվառէ
տ. Եարալեան Կատարինէ
✠ տ. Էմինեան Անանա
✠ կոյս Էնֆիաճեան Իսկուհի
տ. Թամիրեան Սոֆիա
տ. Թայիրեան Եղիսաբէթ
կոյս Թայիրեան Հռիփսիմէ
տ. Թիւնիբէկեան Եղիսաբէթ
տ. Խատիսեան Մարիամ
30 Ծովիանեան Մարիամ
տ. Ծատուրեան Վարդուհի
տ, Կորգանեան Եղիսաբէթ
տ. Ղորղանեան Նունէ
տ. Ղամբարեան Նունէ
տ. Ղարաջեան Մարիամ
տ. Ճգնաւորեան Մարիամ
տ. Մաղաթեան Անանա (նոր անդամ)
✠ տ. Մանթաշեան Դարիա
Մարկոսեան Կատարինէ
40 տ. Մարտիրոսեան Հայկանուշ
տ. Մարտիրոսեան Մարիամ
✠ տ. Մեհրաբեան Կատարինէ
Մելիքեան Մարիամ (նոր անդամ)
տ. Միլեան Վարվառէ
տ. Միրզոյեան Եղիսաբէթ
տ. Մութաֆեան Շողակաթ
✠ տ. Նադիրեան Կատարինէ
տ. Նունուֆարեան Նատալիա
✠ տ. Շադինեան Քալի
50 տ. Շումախեր Եկատերինա
✠ տ. Զիթախեան Սոֆիա
✠ տ. Ռոտինեան Նատալիա
տ. Ռոտինեան Անանա
տ. Ռոտինեան Վառվառէ
Սաֆարեան Նատալիա
տ. Սարուխանեան Յուստինէ
տ. Վարդանեան Անանա
տ. Վարդանեան Նունէ
տ. Վարդապարկեան Օլգա
60 տ. Տէր-Առաքելեան Եւգենիա
տ. Տէր-Մարգարեան Շուշանիկ
տ. Քալանթարեան Սոֆիա
տ. Քանանեան Նատալիա
տ. Օգանէսեան Շուշանիկ
տ. Քալանթարեան Սաթենիկ
տ. Քամոյեան Եղիսաբէթ
67 տ. Փիլիպոյեան Անաստասիա

*) Ադամեան (Ներսեսեան) Թամար
Ալիխանեան Կատարինէ
Ալէքեան Վարվառէ
Արամակլիսեան Նունէ
Արամեան Եղիսաբէթ
Արզումեան Կատարինէ, Մայրապետ
Արզումեան Կատարինէ, Իշխ.
Բաղդոյեան Թեկլէ
Դաւթեան Մարիամ
✠ Եւանգուլեան Կատարինէ
Եւանգուլեան Նունէ
Էնակոլոփեան Նատալիա
Թադէոսեան Աննա
✠ Թամամշեան Սոֆիան
Թամամշեան Վարվառէ
✠ Թայիրեան Կատարինէ
Իսամանեան Սալոմէ
Լիանոզեան
Խարազեան Վարվառէ
Խուբեան Փեփրոնիա, մայրապետ
Խուդաղեան Վարդուհի
Ծովիանեան Մայա
Ծովիանեան Կատարինէ
Կամսարական Աննա
✠ Ղորղանեան Աննա
✠ Մելիքեան Աննա
✠ Միրզոյեան Դարիա
Նազարբէգեան Մինա
Նազարբէգեան Նունէ
Զանումեան Մինա
Ռօսինեան Կատարինէ
Սարգսեան Եղիսաբէթ
Ստեփանեան Նունէ
✠ Ստեփանեան Ծաղիկ
Վարշամեան Վառվառէ
Տէր-Աստուրեան Վարվառէ
Տէր-Յակոբեան Եւալինա
Տէր-Յովսէփեան Օսաննա
Քանանեան Վառվառէ
Քալանթար Սոֆիա

*) Հետևեալ անձինք համաձայն ընկերութեան սկզբնական կանոնադրութեան վճարել են միայն 100 ռ.։

ԻՍԿԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

ա. Աբելեան Հեղինէ (նոր անդամ)
ա. Աբեսալոմեան Նունէ
ա. Աբովեան Նատալիա
օր. Ալթանդիլեան Լուսիկ
ա. Աւետիսեան Թագուհի
ա. Աւետեան Նունէ
ա. Անանեան Վարվառէ
ա. Ամբարդանեան Թամար
ա. Ամբարդանեան Վարվառէ
ա. Ալիխանեան Վարվառէ
ա. Անանեան Մարիամ
օր. Ադանեան Նուարդ
Իշ. Արզումեան - Երկարաբազուկ Սոֆիա
Իշ. Արզումեան Երկարաբազուկ Աննա
ա. Արզումանեան Փառանձեմ
ա. Առատամեան Հեղինէ
ա. Առաքելեան Եղիսաբէթ
ա. Աստուածատրեան Հեղինէ

Բ

ա. Բերեան Եղիսաբէթ
իշ. Բէհբութեան Նադեժդա
օր. Բայսողոլեան Շուշանիկ
ա. Բարխուդարեան Վարդուհի
ա. Բարխուդարեան Եղիսաբէթ
ա. Բարխուդարեան Սաթենիկ
ա. Բոզարջեան Մարիամ
ա. Բոզարջեան Վարվառէ

Գ.

ա. Գարսոյեան Սոֆիա
ա. Գիրգիրեան Եղիսաբէթ
ա. Գէորգեան Սոֆիա
ա. Գիւլպիկեան Զարուհի
ա. Գասպարեան Սարրա

Ե.

ա. Եարգուլեան Լուսիկ
ա. Երամեան Հռիփսիմէ

Զ.

ա. Զարգարեան Ժոզեֆինա

Է.

օր. Էլչիբեկեան Մարգարիտ
ա. Էնիկոլոփեան Եղիսաբէթ
ա. Էնֆիաճեան Աննա
ա. Էնֆիաճեան Վարսենիկ

Թ.

ա. Թադէոսեան Վառվառէ
ա. Թամամշեան Օլգա (նոր անդամ)

տ. Թադէոսեան Ռոզալիա
իշ. Թումանեան Մարիամ
տ. Թումաս Սոֆիա

Ի.

տ. Իսամանեան Լիդիա
տ. Իզբաշեան Սոֆիա
տ. Իզմիրեան Սոֆիա
տ. Իզբաշեան Նատալիա

Լ.

տ. Լիսիցեան Կատարինէ
տ. Լիսիցեան Մարիամ
տ. Լիսիցեան Հեղինէ
տ. Լիանոզեան Մարիամ

Խ.

տ. Խաչատրեան Եղիսաբէթ
տ. Խաչատրեան Նունէ
տ. Խարազեան Մարիամ
տ. Խուդադեան Մարիամ
տ. Խունունց Գայիանէ
տ. Ծովիանեան Մարիամ

Կ.

տ. Կաֆեան Մարիամ (նոր անդամ)
տ. Կաֆեան Նունէ
տ. Կուզանեան Անանա
տ. Կուզանեան Անանա
տ. Կուսիկեան Մարիամ
տ. Կրիտեան Ովսաննա

Հ.

տ. Հաքիմեան Մարիամ
օր. Հախվերդեան Անանա
օր. Հախվերդեան Մաննա
տ. Հայրումեան Սաթենիկ
տ. Հեջուբեան Եղիսաբէթ

Ձ.

տ. Ձամոյեան Եւգինէ
տ. Ձիթողցեան Շուշանիկ

Ղ.

տ. Ղուլեան Անանա
օր. Ղուլիջանեան Կատարինէ
օր. Ղազարեան Կլաւդիա
տ. Ղալամքարեան Թամար
տ. Ղորղանեան Անանա
տ. Ղլտճեան Սաթենիկ
տ. Ղալամքարեան Կատարինէ (նոր անդամ)

Մ.

տ. Մանուէլեան Եւա
տ. Մելիք Բեգլարեան Անահիտ
տ. Մելիք-Բախտամեան Նունէ
տ. Մելիք Ղարագօզեան Մարիամ
տ. Միրզոյեան Սոֆիա
տ. Միրիմանեան Կատարինէ
տ. Միրիմանեան Մարիամ
տ. Միրիմանեան Նատալիա
տ. Մուրադեան Հռիփսիմէ
տ. Մութաֆեան Լիւսի
տ. Միրաքեան Նունէ
տ. Միասնիկեան Եքիսաբէթ
տ. Միրզոյեան Վարվառէ (նոր անդ.)

Յ.

տ. Յակոբեան Սոֆիա
տ. Յակոբեան Նունէ
տ. Յարութիւնեան Երանուհի
տ. Յարութիւնեան Մարիամ

Ն.

տ. Նազարբէգեան Կատարինէ

Շ.

տ. Շաումեան Նատալիա (նոր անդամ)
տ. Շահմուրադեան Ոսկի
տ. Շահնազարեան Նատալիա
տ. Շարբաչեան Նունէ
տ. Շագինեան Վարվառէ
տ. Շահ-Վարոնեան Ռոզալիա
տ. Շիրանց Մարիամ

Ո.

տ. Ումիկեան Անանա
տ. Ունուտցեանց Կատարինէ
օր. Ջանփոլադեան Բեմինէ
տ. Սաղաթելեան Ջարուհի
օր. Սալամբէգեան Նունէ
տ. Սունդուկեան Սոֆիա
տ. Սարեան Սոֆիա
տ. Սուլխանեան Մարիամ
տ. Վարդանէսեան Ամալիա (նոր անդ).
տ. Վարդապետեան Նազեժդա
տ. Վահրամեան Եւգենիա
տ. Վերմիշեան Նատալիա
տ. Տէր-Աւետիքեան Նունէ
տ. Տէր-Յակոբեան Սոֆիա
տ. Տէր-Նիկողայոսեան Նատալիա
տ. Տէր-Միքայելեան Եղիսաբէթ (նոր անդ.)
օր. Տէր-Մկրտչեան Եւա
տ. Տիգրանեան Նատալիա
Տէրտէրեան Սաթենիկ
Տէր-Օհաննէսեան Նատալիա

Ց.

տ. Ցուրինեան Ալեքսանդրա
տ. Ցուրինեան Մարգարիտ

Փ.

տ. Փրիդոնեան Մարգարիտ
տ. Փոնդոյեան Ելենա
տ. Փոնդոյեան Կատարինէ
տ. Փրիդոնեան Մարիամ
տ. Քաթանեան Կատարինէ
տ. Քամոյեան Մարիամ
տ. Քալանթարեան Անանա
տ. Քալանթարեան Սոֆիա
տ. Քիշմիշեան Թամարա
տ. Քալանթարեան Շուշանիկ
տ. Օհաննէսեան Մարիամ
տ. Օհաննէսեան Մարիամ Գէորգեան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 1911 թուի մայիսի 14-ին կայացած ընդհանուր ժողովի արձանագրութեան ընթերցումը։

2. Վարչութեան 1911 թուի գործունէութիւնը։

3. Ընկերութեան 1911 թուի ելևմտից հաշիւը։

4. Վերստուգիչ յանձնաժողովի զեկուցումը։

5. Ընկերութեան նոր կանոնագրութիւնը և 20 յօդուածի փոփոխութիւնը։

6. Մասնաժողով սեփական շէնք ձեռք բերելու նպատակը իրագործելու համար։

7. Նախահաշուի ընթերցումը և վաւերացումը։

8. Վարչական կազմի ընտրութիւնը համաձայն նոր կանոնագրութեան։

ՀԱՅԱՍՏԱՆԻ... (faint stamp)
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Б...
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀՀ Ազգային գրադարան
NL0213707

42. 778